ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

---

No 72-Ն «30» նոյեմբերի 2022

## ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԵՎ 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ և 10-րդ դասարանների ծրագրերը՝ համաձայն հավելվածի:

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

11/30/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

**Հավելված**

**ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի**

**2022 թվականի նոյեմբերի 30-ի N 72 Ն հրամանի**

# ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 7-ՐԴ և 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐ

## «Հայոց պատմություն»
## 7-րդ դասարան

| **Թեմա 1.** |
|---|
| Հայկական լեռնաշխարհը որպես համաշխարհային քաղաքակրթական բնօրրաններից մեկը: Հայոց հայրենիքը: Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-I հազարամյակներում |
| **Նպատակ** |
| Զևավորել՝<br>1. Հայոց հայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանների, հայերի տեղաբնիկ ծագումնաբանության և Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ,<br>2. Ք.ծ.ա. III-I հազ. հայոց քաղաքակրթության առջև ծառացած մարտահրավերները վերլուծելու, ձեռնարկված միջոցառումների և արդյունքների վերաբերյալ կարծիք հայտնելու, եզրահանգումներ անելու հմտություններ,<br>3. Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների և Վանի թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ: |

| **Վերջնարդյունքներ** |
| --- |
| 1. Նկարագրի Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական պայմանները, առանձնահատկությունները, պատմավարչական բաժանումները:<br>2. Ներկայացնի Հայկական լեռնաշխարհի նշանավոր հնավայրերը, Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության և հայոց քաղաքակրթության զարգացման հնագույն բնօրրան լինելու փաստեր:<br>3. Ներկայացնի Հայաստանի մասին վկայություններ, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը վկայող փաստեր, համեմատի հայերի ծագումնաբանության վերաբերյալ տարբեր տեսություններ, ավանդազրույցներ:<br>4. Ներկայացնի Ք.ծ.ա. III-I հազ հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:<br>5. Նկարագրի Վանի թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը, համեմատի արդի իրողությունների հետ:<br>6. Բնութագրի հնագույն պետականությունների և Վանի թագավորության ականռու գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գործունեության վերաբերյալ:<br>7. Վերլուծի Ք.ծ.ա. III-I հազ. հայկական քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, կատարի եզրահանգումներ:<br>8. Գնահատի և արժևորի Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:<br>9. Հետազոտի իրենց տարածաշրջանում գտվող պատմաաշխարհագրական որևէ տեղանք կամ Ք.ծ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձան, փորձի կապեր գտնել ներկա իրողությունների հետ: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական միջավայրը: Հայոց հայրենիքը:<br>2. Հայաստանի պատմավարչական հիմնական բաժանումները հնագույն շրջանից մինչև այսօր:<br>3. Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության զարգացման օրրան և հայոց քաղաքակրթության բնօրրան:<br>4. Հայերի ծագումնաբանությունը:<br>5. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III-II հազարամյակներում:<br>6. Վանի թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը. թագավորության հիմնադրումը:<br>7. Վանի թագավորության հզորացումն ու վերելքը (թագավորների բարեփոխումները. շինարարական գործունեությունը, բանակը, դիցարանը և պետական կառուցվածքը): |

8. Վանի թագավորության թուլացումն ու անկումը:
9. Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգությունը (հոգևոր և նյութական մշակույթը):

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք<br>2. երևակայական ճանապարհորդություն<br>3. տեսանյութի կամ ֆիլմի դիտում, քննարկում<br>4. թեստային աշխատանք<br>5. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>6. քարտեզների հետ աշխատանք<br>7. համեմատական աղյուսակների, գծապատկերների, կազմում<br>8. հետազոտական աշխատանք<br>9. դերային (կերպարային) ներկայացում<br>10. դաս-էքսկուրսիա | **Ժամանակ և տարածություն**<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>1. Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>**Համակարգ (Պետություն)**<br>Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները:<br>2. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>**Անհատներ և հարաբերություններ**<br>3. Ո՞վ է պատմական անհատը:<br>Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի պետական կազմավորումների և ժողովուրդների հետ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ
**Աշխարհագրություն** –քարտեզներ
**Իմ հայրենիքը, Իմ հայրենիքն ու աշխարհը** – առասպելներ, ավանդազրույցներ, հնագույն դիցարաններ, մայրաքաղաքներ
**Հայոց լեզու** – լեզու և գիր, գրային համակարգեր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում
**Մայրենի** – առասպելներ, ավանդազրույցներ
**Արվեստ** - պատմաճարտարապետական հուշարձաններ, կերպարվեստ, կիրառական

| |
|---|
| արվեստ, քաղաքաշինություն |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 35, Հ44, Հ45 |

| **Թեմա 2.** |
|---|
| **Հայկազունի Երվանդյանների թագավորությունը: Հայաստանը Ք.ծ.ա. VII-III դդ.** |
| **Նպատակ** |
| Ձևավորել՝<br>1. Ք.ծ.ա. VII-III դդ. . հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ,<br>2. Համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները վերլուծելու, դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ փաստարկված կարծիք հայտնելու հմտություններ,<br>3. - Հայկազունի Երվանդյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի Ք.ծ.ա. VII-III դդ. պատմության առանցքային դրվագները:<br>2. Նկարագրի Երվանդյան Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի ներկայիս իրողությունների հետ:<br>3. Բնութագրի և համեմատի Ք.ծ.ա. VII-III դդ ակնառու գործիչների գործունեությունը:<br>4. Բնութագրի և մեկնաբանի Ք.ծ.ա. VII-III դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>5. Վերլուծի Ք.ծ.ա. VII-III դդ. քաղաքակրթության ձևավորման, զարգացման և անկման պատմական գործընթացները, քաղաքակրթական փոխազդեցությունները:<br>6. Գնահատի Հայկազունի Երվանդունիների թագավորության մշակութային ժառանգությունը:<br>7. Արժևորի պատմական փործի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Հայկազունի Երվանդյանների թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը. թագավորության հիմնադրումը:<br>2. Հայաստանի և Աքեմենյան Պարսկաստանի հարաբերությունները: Հայաստանը Աքեմենյան տերության կազմում:<br>3. Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները և Հայաստանը: Հայկազունի |

| |
|---|
| Երվանդյանների միանական թագավորության վերականգնումը:<br>4. Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. III դարում: Ներքին և արտաքին մարտահրավերները:<br>5. Հայկազունի Երվանդյանների թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, հասարակական կյանքը, առօրյա կյանքն ու կենցաղը:<br>6. Քաղաքակրթական փոխազդեցությունները: Երվանդյան Հայաստանի մշակութային ժառանգությունը: |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք<br>2. երևակայական ճանապարհորդություն<br>3. ֆիլմի կամ տեսանյութի դիտում, քննարկում<br>4. նկարի վերլուծություն<br>5. թեստային աշխատանք<br>6. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>7. համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>8. դերային (կերպարային) ներկայացում | **Պատճառ և հետևանք**<br>Ինչո՞ւ տեղի ունեցավ,<br>Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ:<br>1. պատճառահետևանքային փոխազդեցություններ<br>2. պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձություն-ները կանխատեսելու և բացատրելու համար<br><br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն**<br>Ի՞նչ է փոխկապակցվածությունը: Որո՞նք են համաշխարհայնացման առավելություն-ներն ու մարտահրավերները:<br>**1.** մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկա-պակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Համաշխարհային պատմություն -** տվյալ ժամանակաշրջանի պետությունների (Մարաստան, Աքեմենյան տերություն, Մակեդոնական տերություն, Սելևկյան պետություն), և ժողովուրդների հետ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** - Հայկազունի Երվանդյանների թագավորության, Աքեմենյան տերության, Մակեդոնական տերության, Սելևկյան պետության, պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Իմ հայրենիքը** – հայոց հայրենիք, առասպելներ, ավանդազրույցներ, մայրաքաղաքներ<br>**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական |

| |
|---|
| գաղափարի ըմբռնում<br>**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և առասպելներ, ավանդազրույցներ<br>**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, արվեստի գործեր |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ15, Հ16, Հ17, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 35, Հ44, Հ45 |

| **Թեմա 3.** |
|---|
| **Հայկական թագավորությունները Ք.ծ.ա. II-I դդ.** |
| **Նպատակ** |
| Ձևավորել՝<br>1. Ք.ծ.ա. II-I դդ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ,<br>2. Հայկական աշխարհակալության ստեղծման և անկման գործընթացներում ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը վերլուծելու հմտություններ,<br>3. Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները հայոց և համաշխարհային պատմության հոլովույթում գնահատելու և արժևորելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի Ք.ծ.ա. II-I դդ. հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:<br>2. Նկարագրի Արտաշեսյան թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի արդի իրողությունների հետ:<br>3. Բնութագրի և համեմատի Արտաշեսյան արքայատոհմի նշանավոր արքաների ներքին և արտաքին քաղաքականությունը, եզրահանգումներ անի նրանց գործունեության վերաբերյալ:<br>4. Մեկնաբանի Ք.ծ.ա. II-I դդ. ռազմաքաղաքական հարաբերությունները, փաստարկված կարծիք հայտնի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>5. Վերլուծի Արտաշեսյան թագավորության հզորացման, հայոց աշխարհակալության ստեղծման նախադրյալները, կործանման պատճառներն ու հետևանքները, անի եզրահանգումներ:<br>6. Համեմատի Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Հայկազունի Երվանդունիների և Արտաշեսյանների օրոք:<br>7. Գնահատի Մեծ Հայքի Արտաշեսյան պետության դերը հայոց պետականության և համաշխարհային պատմության մեջ:<br>8. Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: |

| **Թեմայի բովանդակությունը** | |
|---|---|
| 1. Մեծ Հայքի Արտաշեսյան թագավորության ձևավորման պատմաաշխարհագրական միջավայրը, հիմնադրումը:<br>2. Արտաշես I-ի պետականակերտ և միավորիչ գործունեությունը:<br>3. Տիգրան II Մեծը և Հայկական աշխարհակալ տերության ստեղծումը. տերության սահմանները, տարածքը, կառավարման համակարգը, բանակը, բնակչությունը:<br>4. Հայոց պետությանը սպառնացող մարտահրավերները. Արտաշատի պայմանագիրը:<br>5. Արտաշեսյան Հայաստանի դիվանագիտական ձեռքբերումները: Արտավազդ II:<br>6. Հայկական թագավորությունները (Փոքր Հայք, Ծոփք, Կոմմագենե):<br>7. Արտաշեսյան թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, հասարակական կյանքը:<br>8. Արտաշեսյան թագավորության թուլացումն ու անկումը:<br>9. Հելլենիստական դարաշրջանը Հայաստանում: Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները Արտաշեսյանների օրոք: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք<br>2. էսսեի, ակնարկի պատրաստում<br>3. սահիկաշարի կամ պաստառի պատրաստում<br>4. ֆիլմի, տեսանյութերի դիտում, քննարկում<br>5. նկարի վերլուծություն<br>6. թեստային աշխատանք<br>7. համեմատական աշխատանք (Երվանդունիների թագավորություն և Արտաշեսյանների թագավորություն)<br>8. ժամանակագրական ժապավենի պատրաստում<br>9. դերային (կերպարային) ներկայացում<br>10. դաս-էքսկուրսիա | **Համակարգ (Պետություն)**<br>Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները:<br>1. Դիտարկել պետությունը որպես հասարակութան միասնական քաղաքական համակարգ:<br><br>**Պատճառ և հետևանք**<br>Ինչո՞ւ տեղի ունեցավ,<br>Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ:<br>2. պատճառահետևանքային փոխազդեցություններ<br>3. պատճառահետևանքային կապերի ուսում-նասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար<br><br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>4. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրու-թյունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն -** տվյալ ժամանակաշրջանի երկրներ (Սելևկյան պետություն, Պարթևստան, Պոնտոս, Փյունիկիա, Հրեաստան, Ասորիք, Վիրք, Աղվանք, Հռոմեական կայսրություն, Եգիպտոս և այլն), հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, | |

հավատալիքներ
**Աշխարհագրություն** - Մեծ Հայքի Արտաշեսյանների թագավորության պատմաաշխարհագրական տարածքին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք
**Իմ հայրենիքը** - առասպելներ, դիցարաններ, մայրաքաղաքներ
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ
**Հայոց լեզու** - բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում
**Մայրենի** – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր, ավանդազրույցներ
**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ արվեստի գործեր

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ 15, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 25, Հ 28, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 44, Հ 45

**Թեմա 4.**

**Մեծ Հայքի Արշակունիների թագավորությունը**

**Նպատակ**

Ձևավորել՝
1. I-IV դդ. հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների, Հայաստանի քրիստոնեացման պատմության վերաբերյալ գիտելիքներ,
2. Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, կայացման, հզորացման և անկման պատճառահետևանքային կապերը վերլուծելու հմտություններ,
3. Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ձեռքբերումները և քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը հայոց պատմության մեջ գնահատելու և արժևորելու հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Ներկայացնի I դարի սկզբի և Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանի առանցքային դրվագները, քրիստոնեության ծագումը, քրիստոնեական վարդապետության հիմքերը, Հայաստանում քրիստոնեության տարածման, Հայոց եկեղեցու ձևավորման և կայացման ընթացքը, ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում:
2. Նկարագրի Հայոց եկեղեցու վարչական կառույցը, նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը:
3. Նկարագրի Արշակունյաց թագավորության պետական կարգը, բանակը, առօրյա կյանքն ու կենցաղը և համեմատի արդի և նախորդ շրջանների իրողությունների հետ:

4. Մեկնաբանի ավատատիրության առանձնահատկությունները Հայաստանում:
5. Բնութագրի և համեմատի Արշակունյաց արքաների և ժամանակաշրջանի նշանավոր գործիչների գործունեությունը, կարծիք հայտնի նրանց գործունեության վերաբերյալ:
6. Բացատրի պետություն-եկեղեցի փոխհարաբերությունները, միասնական ձեռնարկումները Արշակունիների թագավորության շրջանում:
7. Վերլուծի արտաքին և ներքին գործոնների ազդեցությունը հայոց պետության զորեղացման և անկման գործընթացներում, կատարի եզրահանգումներ:
8. Գնահատի Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
9. Արժևորի Հայաստանն իբրև առաջին քրիստոնյա պետություն, գնահատի քրիստոնեության ընդունման պատմական նշանակությունը:
10. Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
11. Հետազոտի տարածաշրջանի I-IV դարերի որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի և տարածաշրջանի կամ համայնքի միջև:

**Թեմայի բովանդակությունը**

1. Աշխարհաքաղաքական իրադրությունը Մերձավոր Արևելքում: Հայկական պետությունը դրածո արքաների օրոք:
2. Պարթևա-հռոմեական հակամարտությունը և Հայաստանը: Արշակունիների արքայատոհմի գահակալումը Հայաստանում:
3. Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը:
4. Հայաստանը և հարևան երկրները III դարում: Հայոց թագավորության վերականգնումը ու հզորացումը: Տրդատ III Մեծ:
5. Քրիստոնեության առաջացումը և տարածումը: Քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն
6. Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ:
7. Քրիստոնեության տարածումը Հայաստանում և հայաբնակ շրջաններում I-III դարերում: Աբգար թագավոր, ս. Թադեոս և ս. Բարդուղիմեոս առաքյալներ: Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրումը:
8. Հայաստանը՝ առաջին քրիստոնյա պետություն. ս. Տրդատ Մեծ և ս. Գրիգոր Լուսավորիչ:
9. Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը: Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում:
10. Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը:
11. Ավատատիրական հարաբերությունների ձևավորումն ու առանձնահատկությունները:
12. Կենտրոնական իշխանության զորեղացման փորձերը (Արշակ II, Պապ):
13. Արշակունյաց թագավորության թուլացումն ու անկումը:
14. Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները IV-V դարերում: Ազգային-եկեղեցական ժողովներ:
15. Արշակունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները:
16. Հայկական հելլենիզմի մայրամուտը: Արշակունյաց Հայաստանի մշակութային ժառանգությունը:

<table>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>1. Սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>3. երևակայական ճանապարհորդություն<br>4. ֆիլմի, տեսանյութերի դիտում, քննարկում<br>5. նկարի վերլուծություն<br>6. թեստային աշխատանք<br>7. հետազոտական աշխատանք<br>8. համեմատական աշխատանք<br>9. դերային (կերպարային)<br>10. ներկայացում<br>11. դաս-էքսկուրսիա</td><td>Կառուցվածք և գործառույթ<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները:<br><br>Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>1. Պատմական գործիչների կյանքը, գործունեու-թյունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>Օրինաչափություն<br>Ի՞նչ է օրինաչափ:<br>2. Պատմական Երևույթների միջև օբյեկտի-վորեն գոյություն ունեցող պատճառահե-տևանքային անհրաժեշտ կապեր, փոխա-դարձ պայմանավորվածություններ: Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրություննե-րը դիտարկել որպես պատմական և հասարա-կական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապերը թեմայում</td></tr>
<tr><td colspan="2">Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի երկրներ, հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ:<br>Աշխարհագրություն – Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, Պարթևստանի, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն մեր օրերում, քարտեզի հետ աշխատանք:<br>Իմ հայրենիքը - մայրաքաղաքներ<br>Հասարակագիտություն - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ- ճաշակ-մշակույթ» թեմաներ:<br>Հայոց լեզու –բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում:<br>Մայրենի – նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և ավանդազրույցներ<br>Արվեստ - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ, մշակութային գործիչներ, ստեղծագործություններ արվեստի գործեր</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական</td></tr>
</table>

| ծրագրի վերջնարդյունքների հետ |
| --- |
| Հ1, Հ2, Հ 15, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 25, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 44, Հ 45 |

| **Թեմա 5.** |
| --- |
| **Հայկական պետականության նախարարական շրջանը** |
| **Նպատակ** |
| Ձևավորել՝<br>1. V-IX դդ. հայկական քաղաքակրթության պատմության վերաբերյալ գիտելիքներ,<br>2. V-IX դդ. ազատագրական պայքարի տարբեր շրջափուլերը հետազոտելու, պայքարի արդյունքները գնահատելոու հմտություններ,<br>3. դրված նպատակներին հասնելու համար բոլոր կառույցների, ժողովրդի տարբեր խավերի միասնական ու փոխհամաձայնեցված գործելու անհրաժեշտության գիտակցություն: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի V-IX դդ. միջազգային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունները, հայկական քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները:<br>2. Նկարագրի նախարարական կառավարման համակարգը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները, համեմատի նախորդ ժամանակաշրջանների հետ:<br>3. Բնութագրի և համեմատի V-IX դդ. ազգային-ազատագրական պայքարի ակնառու գործիչների գործունեությունը:<br>4. Քննարկի V-IX դարերում հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը, առաջարկի լուծումների սեփական տարբերակը:<br>5. Համեմատի և մեկնաբանի V-IX դդ. ազգային-ազատագրական պայքարի շրջափուլերը, պայքարի ուղիների վերաբերյալ տարբեր դիրքորոշումները, կարծիք հայտնի դրանց վերաբերյալ:<br>6. Գնահատի V-IX դարերի ազգային-ազատագրական պայքարի արդյունքները՝ կարևորելով համաժողովրդական միասնական պայքարի նշանակությունը՝ դրված նպատակների իրականացման գործում:<br>7. Արժևորի պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Տարածաշրջանի քաղաքական դրությունը V-VI դդ.: Մարզպանական Հայաստանը և Պարսկաստանը:<br>2. Վարդանանց պատերազմը: Ավարայրի ճակատամարտը:<br>3. Վահանանց պատերազմը: Նվարսակի պայմանագիրը: Ինքնիշխանության վերականգնումը Արևելյան Հայաստանում<br>4. Տիեզերական ժողովները և Հայոց եկեղեցին: Քաղկեդոնի ժողովը և Ընդհանրական եկեղեցու պառակտումը: Դվինի եկեղեցական ժողովները: |

| |
|---|
| 5. Դրությունը Արևմտյան Հայաստանում VI դ. ։ Պարսկա-բյուզանդական պատերազմը և Հայաստանը։<br>6. Արաբական նվաճումները և Հայաստանը։ Հայաստանը Արաբական խալիֆայության կազմում։ Հակաարաբական ապստամբությունները։<br>7. Հայոց եկեղեցին VII - VIII դդ.։<br>8. Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները (մծղնեականներ, բորբորիտներ, պավլիկյաններ)։<br>9. Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում V-IX դարերում։ |

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>3. համեմատական աշխատանք<br>4. էսսեների, ակնարկների պատրաստում<br>5. նկարի վերլուծություն<br>6. թեստային աշխատանք<br>7. բանավեճ, քննարկում,<br>8. դերային (կերպարային) ներկայացում<br>9. դաս-էքսկուրսիա | **Ժամանակ և տարածություն**<br>Որտե՞ղ և ե՞րբ։<br>1. Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, ընկերային ու առտնին կյանքն ու սովորույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից։<br><br>**Օրինաչափություն**<br>Ի՞նչն է օրինաչափ։<br>2. Պատմական Երևույթների միջև օբյեկտի-վորեն գոյություն ունեցող պատճառահե-տևանքային անհրաժեշտ կապեր, փոխա-դարձ պայմանավորվածություններ։ Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները, ընդհանրությունները դիտարկել որպես պատմական և հասա-րակական երևույթների և իրադարձությունների օրինաչափություններ։<br><br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը։<br>3. Պատմական գործիչների կյանքը, գործունեու-թյունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները։ Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում։ |

| |
|---|
| **Միջառարկայական կապերը թեմայում** |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ |

(Պարսկաստան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, Վրաստան, Աղվանք) հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ
**Աշխարհագրություն** - Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք
**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեքր» թեմաներ
**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում
**Մայրենի –** ավանդազրույցներ
**Արվեստ -** պատմաճարտարապետական հուշարձաններ

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ**

Հ1, Հ2, Հ 15, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 25, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 33, Հ 35, Հ 44, Հ 45

**Թեմա 6.**

**Ազգային-քրիստոնեական մշակույթի ձևավորումն ու զարգացումը IV-IX դդ.**

**Նպատակ**

Ձևավորել՝
1. IV-IX դդ. ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման ընթացքի, ձեռքբերումերի, մշակութային նշանավոր գործիչների և ստեղծագործությունների վերաբերյալ գիտելիքներ,
2. գրերի գյուտի պատմական նշանակությունը և ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց ու համաշխարհային մշակույթի համատեքստում արժևորելու և գնահատելու հմտություններ,
3. - մշակութային ժառանգության պահպանման, զարգացման և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտության գիտակցություն:

**Վերջնարդյունքներ**

1. Ներկայացնի IV-IX դդ. ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման հիմնական առանձնահատկությունները, ընթացքը, ուղղությունները, բնագավառները, ձեռքբերումերը:
2. Ճանաչի IV-IX դդ. ազգային-մշակութային ականառու գործիչների և ստեղծագործություններ:
3. Արժևորի գրերի գյուտը, կատարի եզրահանգումներ:
4. Գնահատի ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
5. Գիտակցի մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, հաջորդ սերունդներին փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտությունը:
6. Հետազոտի իր համայնքի կամ տարածաշրջանի IV-IX դարերի պատմաճարտարապետական որևէ հուշարձան, փորձի կապեր գտնել հուշարձանի

| | |
|---|---|
| և տարածաշրջանի կամ համայնքի միջև: | |
| **Թեմայի բովանդակությունը** | |
| 1. Մշակութային իրավիճակը Հայաստանում V դարում: Հայոց գրերի, հայալեզու դպրության ստեղծման անհրաժեշտությունը:<br>2. Ս. Մեսրոպ Մաշտոցը և Հայոց այբուբենի ստեղծումը:<br>3. Հայ մշակույթի ոսկեդարը և ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացումը VI-IX դդ. (թարգմանական գրականությունը, Հայ ինքնուրույն գրականության սկզբնավորումը: դպրոցը, պատմագրությունը, փիլիսոփայությունը, բնական գիտությունները, իրավագիտությունը, կերպարվեստը, ճարտարապետությունը, երաժշտությունը և կիրառական արվեստը):<br>4. Հայկական մշակույթի կարևոր ձեռքբերումները: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք<br>2. պաստառների ձևավորում կամ սահիկաշարի պատրաստում<br>3. էսսեների, ակնարկների պատրաստում<br>4. հետազոտական աշխատանք<br>5. համեմատական աղյուսակների և գծապատկերների կազմում<br>6. ինքնաշեն նյութերով ուսումնական ցուցահանդեսի կազմակերպում<br>7. թեստային աշխատանք<br>8. տեսաֆիլմերի դիտում և քննարկում<br>9. դերային (կերպարային) ներկայացում<br>10. դաս-էքսկուրսիա | **Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br><br>Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի, ազգի կյանքում:<br>1. գաղափարների, համոզմունքների, արժեք-ների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում<br>2. միջմշակութային արժեքների առնչություն-ների բացահայտում<br>3. ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** – տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային գործիչներ, ստեղծագործություններ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր<br>**Աշխարհագրություն** - հայ մշակութային գործիչների գործունեություն ծավալած քաղաքներին, երկրներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք<br>**Հասարակագիտություն** - «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմա<br>**Հայոց լեզու** – Լեզու և գիր, բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում, դրանց հիմնական գաղափարի ըմբռնում<br>**Մայրենի –** նշանավոր անհատների, իրադարձությունների վերաբերյալ նյութեր<br>**Գրականություն** – պատմիչներ, թարգմանական գրականություն, աստվածաբաններ | |

| |
|---|
| **Բնագիտություն**-տիեզերքին, երկիր մոլորակին առնչվող թեմաներ<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ 15, Հ 16, Հ 18, Հ 25, Հ 27, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 32, Հ 35, Հ 43, Հ 44, Հ 45 |

| |
|---|
| **Թեմա 7.** |
| **Բագրատունյաց թագավորությունը** |
| **Նպատակ** |
| Ձևավորել՝<br>1. -Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում հայկական քաղաքակրթության զարգացման ընթացքի և առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ,- Անկախության վերականգնման, թագավորության զորեղացման, թուլացման և անկման պատճառահետևանքային կապերը հետազոտելու և եզրահանգումներ անելու հմտություններ,<br>3. - Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները գնահատելու և արժևորելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի Բագրատունյաց թագավորության պատմության առանցքային դրվագները:<br>2. Նկարագրի Բագրատունյաց թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, բնակչության առօրյա կյանքն ու կենցաղը, համեմատի նախորդ և արդի իրողությունների հետ:<br>3. Բնութագրի Բագրատունի նշանավոր արքաների և աշխարհիկ ու հոգևոր գործիչների՝ պետության անվտանգության ամրապնդման ու հզորացմանն ուղղված ձեռնարկումները, կարծիք հայտնի նրանց գործունեության արդյունքների վերաբերյալ:<br>4. Վերլուծի համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների ազդեցությունը Անիի Բագրատունյաց թագավորության հիմնադրման, հզորացման և անկման գործընթացներում, անի եզրահանգումներ:<br>5. Քննարկի X-XI դարերում հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանը ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը, անի եզրահանգումներ:<br>6. Գնահատի և արժևորի Անիի Բագրատունյաց թագավորության քաղաքակրթական ձեռքբերումները:<br>7. Հետազոտի Անիի մայրաքաղաքի կամ IX-XI դարերի պատմաճարտարապետական որևէ հուշարձան, առաջարկի տվյալ հուշարձանը աշխարհին հանրաճանաչ դարձնելու լուծումներ: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Պատմաաշխարհագրական միջավայրը: Քաղաքական դրությունը տարածաշրջանում:<br>2. Հայոց պետության վերականգնումը: Բագրատունիների արքայատոհմի հաստատումը:<br>3. Պետական անկախության ամրապնդումը: Ներքին և արտաքին մարտահրավերները: |

| | |
|---|---|
| 4. Ենթակա թագավորությունները։<br>5. Անիի թագավորության թուլացումն ու անկումը։<br>6. Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում։<br>7. Հայոց եկեղեցին և աղանդավորական շարժումները։ Թոնդրակյան շարժումը։<br>8. Բագրատունյաց թագավորության պետական կառավարման համակարգը, բանակը տնտեսությունը։ Առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները։<br>9. Բագրատունյաց թագավորության մշակութային ժառանգությունը։ | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. սկզբնաղբյուրների հետ աշխատանք,<br>2. սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>3. ֆիլմի կամ տեսանյութի դիտում, քննարկում<br>4. նկարի վերլուծություն<br>5. համեմատական աշխատանք<br>6. հետազոտական աշխատանք<br>7. երևակայական ճանապարհորդություն<br>8. դերային (կերպարային) ներկայացում<br>9. դաս-էքսկուրսիա | **Համակարգ (Պետություն)**<br>Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները։<br>1. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ։<br><br>**Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը։<br>2. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները։ Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում։<br><br>**Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում։<br>3. գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում<br>4. միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում<br>5. ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխան-ցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում։ |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրներ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ։<br>**Աշխարհագրություն** - Բագրատունյաց թագավորության, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզների հետ աշխատանք։<br>**Իմ հայրենիքը** - մայրաքաղաքներ<br>**Հասարակագիտություն** - «Մարդ-ընտանիք-համայնք-հասարակական միջավայր», «Մարդ-բարոյականություն-արժեք», «Մարդ ճաշակ-մշակույթ» թեմաներ։<br>**Հայոց լեզու** – բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, տարբեր բնույթի հայերեն տեքստերի վերլուծում և ընկալում,դրանց հիմնական գաղափարի ըմբռնում։<br>**Մայրենի –** նշանավոր բնակավայրերի, անհատների վերաբերյալ նյութեր և | |

| |
|---|
| ավանդազրույցներ:<br>**ՆԶՊ** - զենքեր, ռազմարվեստ, մարտավարություն:<br>**Արվեստ (ճարտարապետություն, կերպարվեստ, երաժշտություն, կիրառական արվեստ)** - մշակույթի տարբեր բնագավառներ, գործիչներ, ստեղծագործություններ, պատմամշակութային հուշարձաններ, արվեստի գործեր: |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված հիմնական ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Հ1, Հ2, Հ 15, Հ 16, Հ 17, Հ 18, Հ 25, Հ 28, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 33, Հ 35, Հ 44, Հ 45 |

**«Հայոց պատմություն»**
**10-րդ դասարան**

| **Թեմա 1.** |
|---|
| **Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները Ք.ծ.ա. III-II հազարամյակներում** |
| **Նպատակ** |
| Զարգացնել Ք.ծ.ա. III-II հազ Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ձևավորման, զարգացման, անկման գործընթացները հետազոտելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Նկարագրի Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքի առանձնահատկու-թյունները, պատմավարչական փոփոխությունները:<br>2. Ներկայացնի Ք.ծ.ա. III-II հազ. վաղ պետական կազմավորումների ձևավորման պատմաշխարհագրական միջավայրի առանձնահատկությունները, պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները, այդ կազմավորումների հիմնադիր ցեղերի տեղաբնիկ ծագումնաբանությունը վկայող փաստերը:<br>3. Վերլուծի վաղ պետական կազմավորումների քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ձևավորման, զարգացման և անկման պատճառահետևանքային կապերը, կատարի եզրահանգումներ:<br>4. Փաստարկի և բացատրի աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը վաղ պետական կազմավորումների ձևավորման և զարգացման վրա:<br>5. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>6. Գնահատի Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների տեղն ու դերը Հին Արևելքի քաղաքակրթությունների համակարգում և հայոց պատմության մեջ: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Հայկական լեռնաշխարհը որպես հայոց քաղաքակրթության բնօրրան:<br>2. Պետություն հասկացությունը և դրա ձևավորման, զարգացման և կայացման ուղիները:<br>3. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. III հազարամյակում:<br>4. Հայկական լեռնաշխարհի վաղ պետականությունները Ք.ծ.ա. II հազարամյակում:<br>5. Վաղ պետական կազմավորումների հիմնադիր ցեղերի տեղաբնիկ ծագումնաբանու-թյունը:<br>6. Ընկերային-տնտեսական կյանքը:<br>7. Քաղաքակրթական ձեռքբերումները և մշակութային կյանքը: |

<table>
<tr><th>Առաջարկվող գործունեության ձևեր</th><th>Խաչվող հասկացություններ</th></tr>
<tr><td>1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում /սահիկաշարեր, տեսանյութեր, պաստառներ/<br>3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Քննարկում, բանավեճ<br>7. Դաս-էքսկուրսիա</td><td>Ժամանակ և տարածություն<br>Որտե՞ղ և ե՞րբ:<br>1. Դիտարկել պատմության շրջադարձային իրադարձությունները, երևույթները, անհատների, հասարակությունների և քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունները, անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:<br><br>Համակարգ (Պետություն)<br>Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները:<br>2. Դիտարկել պետությունը որպես հասարակութան միասնական քաղաքական համակարգ:<br><br>Անհատներ և հարաբերություններ<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>3. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:</td></tr>
<tr><td colspan="2">Միջառարկայական կապերը թեմայում</td></tr>
<tr><td colspan="2">Համաշխարհային պատմություն - տվյալ ժամանակաշրջանի պետական կազմավորումների և ժողովուրդների հետ հարաբերություններ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>Աշխարհագրություն - Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական առանձնահատ-կությունները, հնագույն պետական կազմավորումների սահմանների և ժողովրդագրական հետագա փոփոխություններ, քարտեզներ<br>Հասարակագիտություն - «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ<br>Հայոց լեզու- Հայերենը՝ որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ու ինքնուրույն լեզվաճյուղ /հայերենի տեղն ու դերը հնդեվրոպական լեզվաընտանիքում:<br>Գրականություն – ավանդազրույցներ, առասպելներ<br>Արվեստ - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ</td></tr>
<tr><td colspan="2">Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ</td></tr>
<tr><td colspan="2">Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41, Մ44, Մ45</td></tr>
</table>

| Հայկական լեռնաշխարհի պետությունները Ք.ծ.ա. IX-III դարերում |
|---|
| **Թեմա 2.** |
| **Նպատակ** |
| Զարգացնել Ք.ծ.ա. IX-III դարերի հայկական պետությունների քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ձևավորման, զարգացման, անկման գործընթացները և դրանց վրա աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունները հետազոտելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի Ք.ծ.ա. IX-III դդ. Հայկական լեռնաշխարհի պետությունների պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:<br>2. Փաստարկի և բացատրի աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը Ք.ծ.ա. IX-III դդ. պետությունների ձևավորման, զարգացման և անկման վրա:<br>3. Մեկնաբանի Վանի թագավորության նշանավոր արքաների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br>4. Վերլուծի Ք.ծ.ա. IX-III դդ. պետությունների քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ձևավորման, զարգացման և անկման պատճառահետևանքային կապերը, կատարի եզրահանգումներ:<br>5. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>6. Գնահատի Հայկական լեռնաշխարհի Ք.ծ.ա. IX-III դդ. պետությունների քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի այլ քաղաքակրթությունների ձեռքբերումների հետ:<br>7. Գիտակցի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Վանի թագավորության հիմնադրման նախադրյալները և պետության կայացման ընթացքը:<br>2. Միասնական կենտրոնացված պետության ստեղծումը (Հայկական լեռնաշխարհի քաղաքական, տնտեսական ու մշակութային միավորման նախադրյալները և ընթացքը):<br>3. Թագավորությունից աշխարհակալություն: Վանի թագավորությունը տարածաշրջանային հզորագույն տերություն:<br>4. Վանի թագավորության թուլացումը և անկումը:<br>5. Վանի թագավորության պետական կարգը, բանակը, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքը:<br>6. Հայկազուն Երվանդյանների թագավորության հիմնադրումը: Հայաստանը և Աքեմենյան Իրանը Ք.ծ.ա. VI-IV դդ.:<br>7. Հայոց պետությունները Ք.ծ.ա. III դարում:<br>8. Հայկազուն Երվանդյանների թագավորության պետական կարգը, բանակը, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքը: |

| Առաջարկվող գործունեության | Խաչվող հասկացություններ |
|---|---|

| ձևեր | |
|---|---|
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում/ սահիկաշարեր, տեսանյութեր, պաստառներ/<br>3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Քննարկում, բանավեճ<br>7. Համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>8. Բանավեճ, քննարկում<br>9. Դերային (կերպարային) ներկայացում<br>10. Դաս-էքսկուրսիա | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն**<br>Ի՞նչ է փոխկապակցվածությունը:<br>Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները:<br>Մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** - Վան թագավորության, Հայկազունի Երվանդյանների թագավորության, Աքեմենյան տերության, Մակեդոնական տերության, Սելևկյան պետության, սահմանների և ժողովրդագրական հետագա փոփոխություններ, քարտեզներ<br>**Հասարակագիտություն -** «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ<br>**Գրականություն –** ավանդազրույցներ, առասպելներ<br>**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաժշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41, Մ44, Մ45 |

| **Թեմա 3.** |
|---|

| Միասնական հայկական պետությունից մինչև աշխարհակալ տերություն |
|---|
| **Նպատակ** |
| Զարգացնել Արտաշեսյանների թագավորության հիմնադրման, զարգացման, անկման գործընթացները, դրանց վրա աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունները, հայոց և համաշխարհային պատմության մեջ թագավորության ունեցած դերակատարումը հետազոտելու հմտություններ: |
| **Վերջնարդյունքներ** |
| 1. Ներկայացնի Արտաշեսյանների թագավորության պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:<br>2. Փաստարկի և բացատրի աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը Արտաշեսյանների թագավորության հիմնադրման, զարգացման, աշխարհակալության ստեղծման և կործանման վրա:<br>3. Մեկնաբանի Արտաշեսյան նշանավոր արքաների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br>4. Վերլուծի Արտաշեսյանների թագավորության քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի ձևավորման, զարգացման և անկման պատճառահետևանքային կապերը, կատարի եզրահանգումներ:<br>5. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>6. Գնահատի Արտաշեսյանների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել տվյալ ժամանակաշրջանի այլ քաղաքակրթությունների ձեռքբերումների հետ:<br>7. Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու անհրաժեշտությունը, գնահատի Տիգրան Մեծի աշխարհակալության տեղն ու դերը Հին աշխարհի պետությունների համատեքստում:<br>8. Գիտակցի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: |
| **Թեմայի բովանդակությունը** |
| 1. Նոր աշխարհակարգի ձևավորումը Մերձավոր Արևելքում. Արտաշեսյանների թագավորության հիմնադրումը:<br>2. Կենտրոնացված պետության ձևավորումը. Արտաշես I-ի բարեփոխումները:<br>3. Տիգրան II Մեծ: Միասնական հայկական պետությունից աշխարհակալ տերություն:<br>4. Տիգրան II Մեծի տերության ձևավորման աշխարհաքաղաքական միջավայրը: Աշխարհակալ բազմազգ տերություն. բազմամշակութային, հասարակական միջավայր:<br>5. Հայաստանը ինքնուրույն դերակատար աշխարհաքաղաքական իրողություններում: Արտավազդ II:<br>6. Արտաշեսյանների թագավորության անկումը:<br>7. Արտաշեսյանների թագավորության պետական կարգը, բանակը, հասարակական-տնտեսական կյանքը:<br>8. Արտաշեսյան Հայաստանի մշակութային ժառանգությունը: Հելլենականությունը |

| և Հայաստանը: | |
|---|---|
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում/ սահիկաշարեր, տեսանյութեր, պաստառներ/<br>3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>7. Բանավեճ, քննարկում<br>8. Դերային (կերպարային) ներկայացում<br>9. Դաս-էքսկուրսիա | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>**Համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և կայունություն**<br>Ի՞նչ է փոխկապակցվածությունը: Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները:<br>Մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածությունը, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերությունները, հնարավորությունները, ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա: |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** – Տիգրան Մեծի տերության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Հասարակագիտություն -** «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ<br>**Գրականություն –** ավանդազրույցներ, առասպելներ<br>**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաժշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41, Մ44, Մ45 | |

**Թեմա 4.**

**Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը**

**Նպատակ**

Զարգացնել Հայաստանում ավատատիրության հաստատման, քրիստոնեության պետական կրոն հռչակման և Արշակունյաց թագավորության հիմնադրման, զարգացման, անկման գործընթացները հետազոտելու հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Ներկայացնի Արշակունիների թագավորության պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:
2. Փաստարկի և բացատրի աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը Արշակունյաց թագավորության հիմնադրման, ամրապնդման, զարգացման և անկման վրա:
3. Մեկնաբանի Արշակունյաց Հայաստանի նշանավոր գործիչների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:
4. Մեկնաբանի ժամանակի մարտահրավերներն ու դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:
5. Վերլուծի և քննարկի ավատատիրական հասարակարգի ձևավորման և հաստատման գործընթացները և հասարակական կյանքի տարբեր ոլորտների կերպափոխությունները:
6. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
7. Գնահատի քրիստոնեության ընդունման և պետություն-եկեղեցի համագործակցության անհրաժեշտությունն ու նշանակությունը:
8. Գնահատի Արշակունիների թագավորության մշակութային ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել նախորդ և արդի ձեռքբերումների հետ:
9. Գիտակցի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

**Թեմայի բովանդակությունը**

1. Արշակունյաց թագավորության ձևավորման նախադրյալները. Հայաստանը երկու գերտերությունների միջև
2. Հայաստանում քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն
3. Եկեղեցի-պետություն փոխհարաբերությունները
4. Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը. օրինաչափություններ և առանձնահատկություններ
5. Թագավորական իշխանության ամրապնդման համար պայքարը (Արշակ II, Պապ)
6. Թագավորության թուլացումը և անկումը
7. Արշակունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը, բանակը տնտեսությունը, ընկերային առօրեական կյանքը:
8. Արշակունյաց Հայաստանի մշակութային և քաղաքակրթական ձեռքբերումները

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում/ սահիկաշարեր, տեսանյութեր, պաստառներ/<br>3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>7. Դերային (կերպարային) ներկայացում<br>8. Բանավեճ, քննարկում<br>9. Դաս-էքսկուրսիա | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>**Կառուցվածք և գործառույթ**<br>Պետական կառավարման կառուցվածքը և պաշտոնյաների գործառույթները |

| **Միջառարկայական կապերը թեմայում** |
|---|
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ<br>**Աշխարհագրություն** - Մեծ Հայքի Արշակունիների թագավորության, Պարթևստանի, Բյուզանդիայի պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Հասարակագիտություն -** «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ<br>**Գրականություն –** ավանդազրույցներ, առասպելներ<br>**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ** |
| Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41, Մ44, Մ45 |

| **Թեմա 5**. |
|---|
| **Միասնական պետության բացակայությունից դեպի վերականգնում. պետականության դրսևորումները Հայաստանում** V - XIX դդ. **դարերում** |
| **Նպատակ** |

Զարգացնել նախարարական համակարգի ու պետական կազմավորումների պատմությունը և Բագրատունյաց թագավորության հիմնադրման, զորեղացման, անկման գործընթացները հետազոտելու հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Ներկայացնի նախարարական համակարգի, Բագրատունյաց թագավորության և այլ պետական կազմավորումների պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:
2. Փաստարկի և բացատրի միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների հետևանքները Հայաստանի ներքաղաքական կյանքում V - XIX դդ.:
3. Մեկնաբանի V - XIX դդ. նշանավոր գործիչների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:
4. Վերլուծի և քննարկի ավատատիրական մասնատվածության հետևանքները:
5. Մեկնաբանի ժամանակի մարտահրավերներն ու դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:
6. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
7. Գնահատի Բագրատունիների թագավորության քաղաքակրթական ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում, փորձի համեմատել նախորդ և արդի ժամանակաշրջանի ձեռքբերումների հետ:
8. Գիտակցի պատմական փորձի և ձեռբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

**Թեմայի բովանդակությունը**

1. Նախարարական համակարգը V–VII դդ.: Մարզպանական Հայաստանի և Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական և տնտեսական դրությունը:
2. Նախարարական համակարգը VIII–IX դդ.:
3. Բագրատունյաց թագավորության հիմնադրումը. արտաքին ու ներքին նախադրյալները:
4. Պայքար երկրի անկախության ամրապնդման համար:
5. Բագրատունյաց թագավորության հզորացումը:
6. Անի թագավորության և ենթակա թագավորությունների փոխհարաբերությունները:
7. Անիի Բագրատունյաց թագավորության թուլացումն ու անկումը:
8. Բագրատունյաց Հայաստանի պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, ընկերային առօրեական կյանքը:
9. Բագրատունյաց Հայաստանի մշակութային և քաղաքակրթական ձեռքբերումները:
10. Պետականության դրսևորումները Հայաստանում (XI դարի երկրորդ կես – XIX դար):

| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
|---|---|
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>1. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային |

| | |
|---|---|
| 3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>7. Համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>8. Բանավեճ, քննարկում<br>9. Դերային (կերպարային) ներկայացում<br>10. Դաս-էքսկուրսիա | ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>**Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում:<br>2. գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում<br>3. միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում<br>4. ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում |

**Միջառարկայական կապերը թեմայում**

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր, հավատալիքներ
**Աշխարհագրություն** - Անիի և ենթակա թագավորությունների վարչա-քաղաքական և աշխարհագրական միջավայրի իմացություն, Արաբական խալիֆայության, Բյուզանդիայի Վրաստանի, Ոսկե Հորդայի, Սելջուկյան սուլթանության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ
**Հասարակագիտություն -** «Պետություն», «Պետություն և մշակույթ», «Պետություն և տնտեսություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ
**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41, Մ44, Մ45

**Թեմա 6.**

**Հայկական պետությունը Կիլիկիայում**

**Նպատակ**

Զարգացնել Կիլիկիայում հայկական պետության ձևավորման, զարգացման, անկման պատճառահետևանքային գործընթացները, հայոց և համաշխարհային պատմության մեջ Կիլիկյան Հայաստանի տեղն ու դերը հետազոտելու հմտություններ:

**Վերջնարդյունքներ**

1. Ներկայացնի Կիլիկիայում հայկական պետության պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:
2. Փաստարկի և բացատրի միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը Կիլիկիայում հայկական պետության ձևավորման, զարգացման և անկման վրա:
3. Մեկնաբանի Կիլիկյան Հայաստանի նշանավոր գործիչների գործունեությունը և գնահատի գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:
4. Մեկնաբանի ժամանակի մարտահրավերներն ու դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:
5. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:
6. Գնահատի Կիլիկյան Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում, փորձի համեմատել նախորդ և արդի ժամանակաշրջանի ձեռքբերումների հետ:
7. Գիտակցի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

**Թեմայի բովանդակությունը**

1. Հայկական միջավայրի ձևավորման նախադրյալները Կիլիկիայում և շրջակա տարածքներում:
2. Պետական կառավարման համակարգում հայկական և տեղական ավանդույթների միաձուլումը:
3. Բազմամշակութային միջավայրը Կիլիկիայում. հայկական քաղաքակրթությունը Կիլիկիայում:
4. Կիլիկյան թագավորությունը և Հայոց կաթողիկոսության համահայկականության հայեցակարգային գաղափարը. եկեղեցի-պետություն համագործակցությունը:
5. Թագավորության արտաքին քաղաքական ուղղությունները և դիվանագիտությունը:
6. Թագավորության անկումը. հայկական պետականության դրսևորումները Կիլիկիայում միասնական պետության անկումից հետո:
7. Կիլիկյան Հայաստանի պետական կառավարման համակարգը, բանակը, տնտեսությունը, ընկերային առօրեական կյանքը:
8. Կիլիկյան Հայաստանի մշակութային և քաղաքակրթական ձեռքբերումները:

| Առաջարկվող գործունեության ձևեր | Խաչվող հասկացություններ |
|---|---|
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների ներկայացում<br>3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>4. Հետազոտական աշխատանք<br>5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>6. Սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>7. Համեմատական | **Անհատներ և հարաբերություններ**<br>Ո՞վ է պատմական անհատը:<br>1. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները: Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:<br><br>**Անհատական և մշակութային արժեհամակարգ**<br>Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյան-քում: |

| | |
|---|---|
| աղյուսակների գծապատկերների, կազմում<br>8. Բանավեճ, քննարկում<br>9. Դերային (կերպարային) ներկայացում<br>10. Դաս-էքսկուրսիա | 2. գաղափարների, համոզմունքների, արժեքների զգացողությունների, մշակութային դրսևորում-ների արժևորում<br>3. միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում<br>4. ազգային ու համաշխարհային մշակութային արժեքները պահպանելու, զարգացնելու, փոխանցելու և հանրահռչակելու անհրաժեշտության արժևորում |
| **Միջառարկայական կապերը թեմայում** | |
| **Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր<br>**Աշխարհագրություն** - Կիլիկյան Հայաստանի, Բյուզանդիայի, Մոնղոլական կայսրության պատմաաշխարհագրական տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր, քարտեզներ<br>**Արվեստ** - մշակույթի տարբեր բնագավառներ (ճարտարապետություն, երաշտություն, կերպարվեստ, կիրառական արվեստ), պատմաճարտարապետական հուշարձաններ | |
| **Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ** | |
| Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41 | |

| Թեմա 7. | |
|---|---|
| **Հայոց պետականության նորագույն շրջանը** | |
| **Նպատակ** | |
| Զարգացնել նորագույն շրջանում հայոց պետականության ձևավորման, զարգացման պատճառահետևանքային գործընթացները, հայոց պատմության մեջ դրանց տեղն ու դերը հետազոտելու հմտություններ: | |
| **Վերջնարդյունքներ** | |
| 1. Ներկայացնի նորագույն շրջանի հայոց պետականության պատմության կարևոր իրադարձություններն ու երևույթները:<br>2. Փաստարկի և բացատրի միջազգային աշխարհաքաղաքական գործընթացների ազդեցությունը Հայաստանի երեք հանրապետությունների ձևավորման, զարգացման, Առաջին ու Խորհրդային հանրապետությունների անկման վրա:<br>3. Մեկնաբանի և գնահատի նորագույն շրջանի հայ նշանավոր քաղաքական գործիչների գործունեությունը:<br>4. Մեկնաբանի ժամանակի մարտահրավերներն ու դրանց դիմագրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները:<br>5. Առաջադրի պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսումներ անի դրանց արդյունքների և հետևանքների վերաբերյալ:<br>6. Գիտակցի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, զարգացման ու հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը: | |
| **Թեմայի բովանդակությունը** | |
| 1. Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակումը: Պետականաշինության գործընթացը:<br>2. Հանրապետությանը սպառնացող մարտահրավերները:<br>3. Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքային հիմնախնդիրները 1918-1920 թթ.:<br>4. Հայաստանի Առաջին Հանրապետության անկումը: Խորհրդային վարչակարգի հաստատումը Հայաստանում: Իշխանության մարմինների ձևավորումը:<br>5. ԽՍՀՄ կազմավորումը: Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ կազմում:<br>6. Խորհրդային Հայաստանի տարածքային հիմնախնդիրները:<br>7. Հայաստանի անկախության հռչակագիրը: Անկախության հանրաքվեի իրավական նշանակությունը:<br>8. Հայաստանի Երրորդ Հանրապետության կայացման գործընթացը:<br>9. Հայաստանի Երրորդ Հանրապետությունը որպես միջազգային իրավահարաբերությունների սուբյեկտ: | |
| **Առաջարկվող գործունեության ձևեր** | **Խաչվող հասկացություններ** |
| 1. Աղբյուրների ուսումնասիրություն<br>2. Շնորհանդեսների | **Համակարգ (Պետություն)**<br>Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: |

<table>
<tr>
<td>

ներկայացում /սահիկաշարեր, տեսանյութեր, պաստառներ/<br>
3. Էսսեի կամ ակնարկի ներկայացում<br>
4. Հետազոտական աշխատանք<br>
5. Տեսանյութի կամ ֆիլմի դիտում և քննարկում<br>
6. Սահիկաշարի կամ տեսանյութի պատրաստում<br>
7. Համեմատական աղյուսակների գծապատկերների, կազմում<br>
8. Բանավեճ, քննարկում<br>
9. Դաս-էքսկուրսիա

</td>
<td>

1. Դիտարկել պետությունը որպես հասարակության միասնական քաղաքական համակարգ:<br>
<br>
**Կառուցվածք և գործառույթ**<br>
2. Պետական կառավարման կառուցվածքը և  պաշտոնյաների գործառույթները<br>
<br>
**Անհատներ և հարաբերություններ**<br>
Ո՞վ է պատմական անհատը:<br>
3. Պատմական գործիչների կյանքը, գործունեությունը, մշակութային ընդհանրությունները և տարբերությունները:  Դիտարկել անհատի դերը և գործունեության ազդեցությունը պատմության հոլովույթում:

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Միջառարկայական կապերը թեմայում**

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Համաշխարհային պատմություն** - տվյալ ժամանակաշրջանի երկրների քաղաքական գործընթացներ, նշանավոր գործիչներ, պատմական կարևոր իրադարձություններ, դեպքեր փաստեր<br>
**Աշխարհագրություն** - աշխարհի երկրներ՝ տարածք, բնակչություն, քարտեզներ<br>
**Հասարակագիտություն -** «Պետություն», «Պետություն և քաղաքացիական հասարակություն», «Պետություն և քաղաքականություն» թեմաներ

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

**Կապը Հանրակրթության պետական չափորոշչով սահմանված միջնակարգ ծրագրի վերջնարդյունքների հետ**

</td>
</tr>
<tr>
<td colspan="2">

Մ11, Մ14, Մ16, Մ17, Մ18, Մ39, Մ40, Մ41

</td>
</tr>
</table>